ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ. /010/ 77-81-22

№ 21/14-2 «08» 01 2019 թ.

08 01

«ԱՆՆԱ -80» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝ Ռ.ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԻՆ

Հասցե՝ ք.Երևան, Քրիստափորի 110 (ՀՎՀՀ06906663)

Հարգելի՛ պարոն Վարդերեսյան,

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և «Աննա-80» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված ՀՀ ՈԿ ԳՀԱԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեր Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ՀՀ ոստիկանության Ինտերպոլ ԱԿԲ-ի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները:

Պայմանագրի 1.3 կետի և Հավելված-2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր 180 օրացուցային օր, որն ավարտվում էր 26.11.2018թ.:

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից Ձեր գրության համաձայն 23.11.2018թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը պայմանագրի կատարման ժամկետը 24 օրացուցային օրով երկարացնելու վերաբերյալ:

Ձեր կողմից 19.12.2018թ. ներկայացվել է կատարողական ակտ, ընդունման–հանձնման արձանագրություն պայմանագրով նախատեսված աշխատանքների մասնակի կատարման վերաբերյալ և հարկային հաշիվ 3.949.127 դրամ գումարի չափով:

Փաստորեն, ստանձնած պարտավորությունների պայմանագրային արժեքի 8000000 ՀՀ դրամից պակաս աշխատանք է կատարվել 4.050.873 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Աննա-80» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության

կողմից բացված գանձապետական 900018005018 հաշվեհամարին փոխանցել 20.254 ՀՀ դրամ, որպես տուգանք՝ պայմանագրի 6.3 կետի համաձայն (պայմանագրի 5.1 կետում նախատեսված պայմանագրի մնացորդային գնի 0.5%):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 29.05.2018թ ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018005018 հաշվեհամարին ենթակա է գանձման 800.000 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը):

ՊԵՏ,ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ՝ Մ.ԲԱԲԱՅԱՆ

Կատարողներ՝
Ս.Մկրտչյան
Է.Հակոբյան
010.77-08-79